


Հանգանակութիւն Ի Նպաստ Հայ Դատի Գործունէութեան

5 Փետրուար 2006
Երուսաղէմ

Այս օրերուս, հրապարակի վրայ է Հայ Դատի գործունէութեան Ի նպաստ հանգանակութիւն մը, կազմակերպուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի Տնտեսական Յանձնախումբին կողմէ:

Համա Հայկական բնոյթ կրող այս ձեռնարկը հայրենիքի եւ Սփիւռքի բոլր գաղութներէն ներս կ'իրագործուի ու կը ձգտի մասնակից դառննել Հայ ազգի բոլոր զաւակները ամենուրեք:

Կը նպատակադրէ օժանդակել Հայ Դատի Յանձնախումբերու եւ Կեդրոնական Հայ Դատի գրասենեակներու գործունէութեան, որոնք տարիներ շարունակ կ'ըցած են քաղաքական-քարոզչական լուրջ գործունէութիւն ծաւալել եւ արժանի դառնալ համազգային գուրգուրանքով:



Տոմսի մը օրինակ:

Նուիրատուութեան տոմսերու թիւերու հիման վրայ վիճակով տեղի պիտի ունենայ նուէրներու բաշխում:

Մէկ հատ	Ա նուէր	50,000 Ամ. Տոլար
Մէկ հատ	Բ նուէր	30,000 Ամ. Տոլար
Մէկ հատ	Գ նուէր	20,000 Ամ. Տոլար
Տաս հատ	Դ նուէր	խրաքանջիւրը 5,000 Ամ. Տոլար
Յիսուն հատ	Ե նուէր	խրաքանջիւրը 1,000 Ամ. Տոլար

Ինչպէս ծանօթ է Դաշնակցութիւնը Հայ Դատի իր գործունէութիւնը յատկապէս Հայաստանի անկախացումէն ետք ընդարձակած է: Այսօր, ունինք չորս գլխաւոր կեդրոնական գրասենեակներ, որոնք քաղաքական նկատառումներով հաստատուած են Միացեալ Նահանգներու, Եւրոպայի, Միջին Արեւելքի եւ Ռուսաստանի մայրաքաղաքներու մէջ: Այս գրասենեակներու կողքին, իւրաքանչիւր կազմակերպուած շրջան եւ գաղութ ունի իրենց գրասենեակները, որոնք ներդաշնակուած կերպով կը գործեն. Հայ ազգի քաղաքական իրաւունքներու տէր ըլլալու, հետեւելու միջազգային քաղաքականութեան եւ Միջին Արեւելքի քաղաքական աննախատեսելի փոփոխութիւններուն, ապա համադրելով այս բոլորը, տրամադրելու հայրենի քաղաքականութեան:

Փափաքողները հաճին դիմել Հ.Յ.Դ. Երուսաղէմի Կոմիտէութեան (Ընկ. Յակոբ Սեւանի 054-6205278)